ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2024 թվականի N 1142 - Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետարանին՝

1) Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների ծրագրի շրջանակներում «Ժոնգ-Թոնգ Բաս Հոլդինգ ԿՈ» (ZHONGTONG BUS HOLDING CO LTD) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2024 թվականի ապրիլի 8-ին կնքված N «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-24/6» պայմանագրի շրջանակներում մատակարարվելիք 7 տրոլեյբուսների մասով նույն պայմանագրի 8.13-րդ կետում «տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «քսանհինգ աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

2. Սույն որոշման դրույթները տարածվում են 2024 թվականի ապրիլի 8-ին կնքված N «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-24/6» պայմանագրի 8.13-րդ կետով նախատեսված ծանու-

ցումը «Ժոնգ-Թոնգ Բաս Հոլդինգ ԿՈ» (ZHONGTONG BUS HOLDING CO LTD) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն ուղարկելուց՝ 2024 թվականի մայիսի 24-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ